## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԼՈՒՍԱՆՑԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Հայերէն ձեռագիր Աւետարաններէն ոմանց լուսանցքներուն վրայ կը տեսնուին՝ ընդհանրապէս գրչին ձեռքով արձանագրուած բառեր, իբրեւ տարընթերցում, սրբագրութիւն կամ բացատրութիւն։*

*Սոյն յօդուածով կը ներկայացնենք Ս. Ց. թիւ 3252 Աւետարանին պարունակած լուսանցագրութիւնները, որոնք բաւական ուշագրաւ են իրենց թիւով և բնոյթով։*

*Ձեռագրին սկզբնական յիշատակարանը կորսուած է. բայց նկատի առնելով գործածուած մագաղաթը, գրչութեան տիպը և մանրանկարչութեան արուեստը, կարելի է զայն զետեղել յետռօսլինեան շրջանի Կիլիկեան Աւետարաններու շարքին, այսինքն ԺԴ. Դարու երկրորդ կիսուն մէջտեղերը։*

*Հայերէն բնագրին համեմատութեան համար գործածած ենք 1929 Թուականին Վիեննա տպուած Աստուածաշունչը, իսկ յունարէնին համար՝ 1914ին Լոնտոն տպուած Նոր Կտակարանը։*

### ՄԱՏԹԷՈՍ

1. — Ը. 15. — *յոտն եկաց և պաշտէր* զնա (*Ձեռ.*)
զնոսա (*լս.*)

2. — Թ. 8. — *Իբրև տեսին ժողովուրդքն*, զարմացան
երկեան

*Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ։*

3. — Ժ. 29. — դանգի *միոջ վաճառին*
ասարի

*Յունարէն*, ἀσσαρίου πωλεῖται

4. — Ժ. 35. — *Քանզի եկի քակել զայր ի հաւրէ* իւրմե, *և զդուստր ի մաւրէ*
իւրմե

*Ընդգծեալ բառերը կը գտնուին լուսանցքի վրայ։*

5. — ԺԱ. 19. — *Եւ արդարացաւ իմաստութիւն* յորդւոց *իւրոց*
ի գործոց

*Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ։*

6. — ԺԴ. 6. — *կաքաւեաց դուստրն Հերովդի[ադ]այ*
*Յնր.* τῆς Ἡρῳδιάδος

*Անկիւնաւոր փակագիծով գրուած տառերը կը գտնուին լուսանցքի վրայ։*

7. — ԺԵ. 6. — *և խոտէք* զբանն *Աստուծոյ*
պատիրանն

*Նոյն տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ։*

8. — ԺԵ. 7. — *բարւոք մարգարէացաւ* ի վերայ *ձեր Եսայի*
վան

digitised by A.R.A.R.@

9. — ԺԶ. 1. — *խնդրէին* ի նմանէ *նշան յերկնից*
*Ընդգծեալը լուսանցքի վրայ է, մինչ տողին մէջ իր տեղը բաց ձգուած է։*

10. — ԺԶ. 21. — *բազում չարչարանս* չարչարել
անարգել
*Յունարէնը պարզապէս կ'ըսէ* παλλὰ παθεῖν

11. — ԺԷ. 24. — *Թագաւորք* ազգաց
երկրի, *ինչպէս ունի յունարէնը։*

12. — ԺԸ. 24. — *պարտապան մի* բիւր քանքարոյ
բազում տաղանտոց
μυρίων ταλάντων

13. — ԻԱ. 15. — աւրհնութիւն *որդւոյ Դաւթի*
ովսաննա

14. — ԻԲ. 16. — *և ոչ հայիս յերեսս մարդոյ*
կան
ἀνθρώπων

15. — ԻԵ. 20. — *որ զհինգ քանքարն առ*
τάλαντα
*Լուսանցագրութիւն՝ կէսը կտրուած, կը լրացնենք առնելով ուրիշ ձեռագրէ մը. «տաղանտն [կշռոյ] անուն է և [ոչ թուոյ]»։*

16. — ԻԶ. 15. — *Եւ նոքա* կշռեցին *նմա*
ուխտեցին
ἔστησαν
*Վիեննա, լս. կամ,* խոստացան։

17. — ԻԶ. 41. — *զի մի* անկանիցիք *ի փորձութիւն*
գայցէ
ἵνα μὴ εἰσέλθητε εἰς πειρασμόν

18. — ԻԶ. 52. — *սրով* անկանիցին
կորնչիցին
ἀπολοῦνται

19. — ԻԷ. 6. — *ոչ է արժան ընդունել զայդ* ի կորբան
յընծայանոցն
εἰς τὸν κορβονᾶν

20. — ԻԷ. 33. — *անուանեալ Գողգոթա*
գող

21. — ԻԷ. 56. — *և Մարիամ Յակովբայ և Յովսեա մայր*
փայ
*Այս տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ։*

## ՄԱՐԿՈՍ

1. — Ա. 2. — *որպէս և գրեալ է* յեսայի մարգարէ
ի մարգարէս
*Այս տարբերակը կը գտնուի յունարէն բնագրին մէջ ալ։*

2. — Ա. 13. — զաւուրս քառասուն
Խ տիւ, Խ գիշեր
τεσσεράκοντα ἡμέρας

digitised by A.R.A.R.@

3. — Բ. 14. — Ետես զՂեւի Ալփեայ
զՅակովբոս
Λευεὶν τὸν τοῦ Ἀλφαίου

4. — Բ. 16. — ուտէք և (և) ըմպէք
տէ պէ
Վիեննա, լա. եւ ըմպէ, չի բաղումս պակասէ։

5. — Դ. 12. — զի տեսանելով տեսցեն, և մի՛ տեսցեն
գիտասցեն
ἴδωσιν

6. — Զ. 17. — վասն Հերովդիայ
ադայ
Ἡρῳδιάδα

Նոյնը կրկնուած է նաև 22րդ համարին մէջ։

7. — Ը. 8. — Եւթն զամբիւղ
արմաւեն[ի]
սփիւրիդա[յ]
σπυρίδας

8. — Թ. 30. — յերիր աւուր յառնէ
րիցէ
Ընր. 31 ἀναστήσεται

9. — ԺԳ. 25. — և աստեղք յերկնից թաւթափեսցին
անկցի[ն]

10. — ԺԴ. 12. — յորժամ զզատիկն զենուին
զպաս[ե]քն

11. — ԺԵ. 4. — տես քանի ամբաստանեն զքէն
վկայեն

Այս տարբերակը կը տեսնուի յունարէն բնագրին մէջ ալ։

12. — ԺԵ. 46. — պատեաց կտաւովն
պաստառակալ

ՂՈՒԿԱՍ

1. — Ա. 28. — Եւ եկեալ առ նա ասէ. ուրախ լեր բերկրեալդ
մտեալ ողջոյն
εἰσελθὼν Χαῖρε

2. — Ա. 61. — որոյ կոչի անուն Յովհաննէս
անուն այս
τῷ ὀνόματι τούτῳ

3. — Բ. 41. — ի տաւն զատկին
պասեք
τῇ ἑορτῇ τοῦ πάσχα

4. — Գ. 19. — վասն Հերովդիայ
ադայ

5. — Զ. 21. — Երանի որ քաղցեալ են այժմ, զի յագեսցին
իցէք իցիք

digitised by A.R.A.R.@

Երանի է որ լան այժմ, զի ծիծաղեսցին
յցէք իջիք
Հմմտ. Տպ. Վիեննայի, ծանօթութիւն լուսանցքի։

6. — Է. 33. — ոչ ուտէր և ոչ ըմպէր
հաց գինի
Հմմտ. ըստ վերնոյն։

## ՅՈՎՀԱՆՆԷՍ

1. — Գ. 4. — որ ծերն իցէ
ծնեալն
γέρων ὤν

2. — Ջ. 29. — յայն որ առաքեացն զիս
զոր առաքեացն նա
εἰς ὃν ἀπέστειλεν ἐκεῖνος

3. — ԺԲ. 28. — փառաւորեա զանուն քո
զորդի
τὸ ὄνομα

4. — ԺԲ. 30. — եկըն բարբառս այս
եղեւ
γέγονεν

5. — ԺԴ. 17. — ոչ կարէ ընդունել
առնուլ
λαβεῖν

6. — ԺԶ. 26. — եթէ ես հարցից զՀայր
աղաչեցից
ἐρωτήσω

7. — ԺԶ. 29. — ահա արդ յայտնութեամբ խաւսիս
համարձակ
ἐν παρρησίᾳ

8. — ԺԸ. 28. — զի ուտիցեն զզատիկն
պասեքն

9. — ԺԹ. 17. — և կոչէր եբրայեցերէն Գողգոթա
գող
Τολγοθᾶ

Այս տարբերակներուն ծագումը բաւական հին կը թուի, քանի որ անոնցմէ շատերուն կարելի է հանդիպիլ հնագոյն ձեռագիրներու մէջ ալ։ Տեսնել, օրինակի համար, Սեբաստիոյ թիւ 25 Աւետարանին նկարագրութիւնը, որ կը պարունակէ 38 լուսանցագրութիւններ (Ցուցակ Ձեռ. Սեբաստիոյ, էջ 27)։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@